Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 4
«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 29 մայիսի 2018թ.
Ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Վարդանյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ. Ներսիսյան, Լ. Միքայելյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ա. Եղիազարյան, Հ. Թադևոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Շեկոյան

1. «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման վայրի, մասնակիցներին ուղարկված ծանուցման, հայտերի ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /ընթացակարգի արդյունքների ամփոփման/ մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 26.04.2018թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2018 թվականի մայիսի 03-ին, Ժամը՝ 12:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 Հայտեր էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	**Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել "X"/**
«Սմարթլայն» ՍՊԸ	X
«ԱՆԿՅՈՒՆ» ՍՊԸ	X
«Վահատ» ՍՊԸ	X
«Նորմա-պլյուս» ՍՊԸ	X

2. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով ընթացակարգի 14 մայիսի 2018թ. Ժամը՝ 11:00-ի նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց նիստը կասեցնել և N 1, 4, 9 չափաբաժիների մասով ֆինանսական միջոցները գերազանցող գների նվազեցման շուրջ վարել միաժամանակյա բանակցություններ ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված նշված չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած հետևյալ Մասնակիցների՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի «Անկյուն» ՍՊԸ-ի և «Վահատ» ՍՊԸ-ի հետ:

2.1 Գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նիստը սկսվել է 2018 թվականի մայիսի 16-ին, Ժամը՝ 10:00-ին ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության շենքում, ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով:

2.2 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման գնման ձևով իրականացվող գների նվազեցման շուրջ բանակցություններին ոչ մի մասնակից չէր ներկայացել, ուստի NN 1, 4, 9 չափաբաժիների մասով մասով գնի նվազեցում չի կատարվել:

2.3 Ելնելով վերոգրյալից, ստորև ներկայացվում են «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխան կազմված հայտերի հիման վրա Մասնակիցների առաջարկած վերջնական գները՝

չափաբաժնի համարը	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Գնման առարկայի մոտավոր ընդհանուր գին Նախահաշվային	քանակը	«Նորմա-Պլյուս» ՍՊԸ		«Անկյուն» ՍՊԸ	«Սմարթլայն» ՍՊԸ		«Վահատ» ՍՊԸ	
				Առաջարկած գինը առանց ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը	Առաջարկված ընդհանուր գինը	Առաջարկած գինը առանց ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը	Առաջարկած գինը առանց ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	Թուղթ, A4 ֆորմատի	4125000	6250	-	-	-	3958333,33	4750000,00	4296875,00	5156250,00
2	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	15000	150	-	-	-	8750,00	10500,00	8250,00	**9900,00**
3	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	15000	150	-	-	28500,00	17500,00	**21000,00**	23375,00	28050,00
4	Սոսինձ՝ հեղուկ	20000	20	-	-	293400	-	-	247500,00	297000,00
5	Հաշվեսարք, գրասենյակային	40000	10	-	-	**34000,00**	50000,00	60000,00	45833,00	55000,00
6	Մարկերներ	40000	200	-	-	**20600,00**	21666,67	26000,00	22000,00	26400,00
7	Շտրիխներ	4000	20	-	-	-	2666,67	**3200,00**	3667,00	4400,00
8	Թղթադարակ, հարկերով, պլաստմասե	125000	50	-	-	-	66666,67	**80000,00**	-	-
9	Թղթի ամրակներ	6000	6000	-	-	8400,00	375000,00	450000,00	467500,00	561000,00
10	Դակիչ մեծ	60000	20	-	-	37000,00	28333,33	**34000,00**	-	-
11	Կարիչ, մինչև__ 20 թերթի համար	48000	80	-	-	48000,00	30000,00	36000,00	29333,33	**35200,00**
12	Դատարկ սկավառակ, առանց տուփ, CD	5000	50	-	-	3500,00	3333,33	4000,00	3208,00	**3850,00**
13	Ֆլեշ հիշողություն, 8 GB	80000	20	57500,00	**69000,00**	61000,00	71666,67	86000,00	-	-
14	Թղթապանակ, կոշտ կազմով	90000	100	-	-	-	45000,00	**54000,00**	55000,00	66000,00
15	Թղթապանակ՝ ամրակով	140000	200	-	-	-	13333,33	16000,00	13200,00	**15840,00**
16	Գրասենյակային գիրք, մատյան, 70-200 էջ, տողանի, սպիտակ էջերով	42000	60	-	-	33000,00	30000,00	**36000,00**	30250,00	36300,00
17	Նոթատետրեր	60000	50	-	-	9500,00	7083,33	8500,00	5958,00	**7150,00**
18	Նամակի ծրար, A5 ձևաչափի	30000	1000	-	-	25000,00	16666,67	**20000,00**	27500,00	33000,00

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով ԳՀ միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված ընթացակարգի մասնակիցներն իրենց գնային առաջարկը ներկայացրել են ԱԱՀ-ն ներառյալ, բացի «Անկյուն» ՍՊԸ-ից, որն իր գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ-ի:

3. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում հանձնաժողովը որոշել էր ծանուցում ուղարկել NN 3, 7, 8, 10, 14, 16, 18 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Սմարթլայն» ՍՊԸ-ին, NN 5, 6 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Անկյուն» ՍՊԸ-ին, N 13 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին, NN 2, 11, 12, 15, 17 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Վահատ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև 18.05.2018 թվականին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացվել էր հարցում /հավելված 8/ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

4. Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հրապարակած 23.05.2018թ. եզրակացությունները, ինչպես նաև 2018 թվականի փետրվարի 1-ի համապատասխանաբար N 3 արձանագրությունը, «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում, որը կայացավ 29.05.2018թ. Ժամը՝ 17:00, **որոշեց՝**

4.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին NN 3, 7, 8, 10, 14, 16, 18 չափաբաժինների մասով հիմք ընդունելով հրավերով ներկայացրած փաստաթղթերը և շնորհել պայմանագիր, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

4.2 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Վահատ» ՍՊԸ-ին NN 2, 11, 12, 15, 17 չափաբաժինների մասով հիմք ընդունելով հրավերով ներկայացրած փաստաթղթերը և շնորհել պայմանագիր, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

4.3 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Անկյուն» ՍՊԸ-ին NN 5, 6 չափաբաժինների մասով հիմք ընդունելով հրավերով ներկայացրած փաստաթղթերը և շնորհել պայմանագիր, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

4.4 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին N 13 չափաբաժնի մասով հիմք ընդունելով հրավերով ներկայացրած փաստաթղթերը և շնորհել պայմանագիր, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

5. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, 3-րդ կետի համաձայն՝ հայտարարվում է անգործության ժամկետ 5 օրացույցային օր տևողությամբ, հաշված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից: Եթե նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից բողոքարկման խորհրդում չի բողոքարկում, ապա ընտրված Մասնակիցների՝ «Վահատ» ՍՊԸ-ի, «Սմարթլայն» ՍՊԸ-ի, «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի և «Անկյուն» ՍՊԸ-ի հետ կկնքվեն գրենական պիտույքներ գնման պայմանագրեր:

5.2 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ա. Վարդանյան

Քարտուղար՝ ---------- Հ. Շեկոյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Գ. Ներսիսյան

2. ---------- Լ. Միքայելյան

Բացող անդամներ՝

1. ---------- Հ. Թադևոսյան

2. ---------- Ա. Եղիազարյան